Երբ Դիոքղեատիանոսն և Գալերիոսը հրաժարուեցին գահից, այն ժամանակ անպատշաճ կերպով Կոստանդինն անուշադիր թողին և Իտալիայի համար Սեվերոսին նշանակեցին։ Հազիւ թէ նա իրաւունք էր ստացել նեբկայանալ հօրը, երբ ստիպուած եղաւ հաշուի առնել այն հանգամանքը, որ Իտալիայում Սեվերոսը թշնամաբար վերաբերուեց և կամենում էր ձերբակալել նրան, որի պատճառով և Կոստանդինի ծառաները, որպէս զի հետապնդումն չլինի, մրոնում էին կայարաններում սիրոները և ձիանոց երակները կտրում։ Ահա թէ ինչպիսի մանկութիւն ունեցաւ Կոստանդինը։

Իւր գործունէութեան մէջ Կոստանդինը պարտաւորուած էր հետևել հօր խաղաղ քաղաքականութեանը, որը քրիստոնէութեանը մօտ էր և չէր հալածում։ Կոստանդը միաստուածական էր։ Պէտք է նկատել, որ երկու տեսակ միաստուածականներ կային։ Առաջին միաստուածականները նոր-պղատոնական դպրոցին էին պատկանում։ Այս դպրոցի հետևողները աստուածների մասին եղած պատմութիւնները մեկնում էին փիլիսոփայական մտքով, մեկնում էին որպէս զօրութիւններ և նրանց միացնում վերացական մի Աստուծոյ, գլխաւորապէս Զևսի անձնաւորութեան մէջ։ Այս տեսակի միաստուածականները քրիստոնէութեան թշնամի էին։ Նրանց գլուխն էին անցել գիտնականներ, և նրանք տեսնում էին, որ քրիստոնէութիւնը իրենց միաստուածականութեանը հակառակ է, մանաւանդ դեռ իրենց չէր յաջողուել հաստատուն հիմքերի վրայ դնել այդ վարդապետութիւնը, ուստի և քրիստոնէութիւնը ջնջելը նրանց ամենամեծ ցանկութիւնն էր։ Երկրորդ տեսակ միաստուածականները — «անյաղթելի արեգակի» — invicti solis, պաշտաման երկրպագուներն էին, որոնց պատկանում էր նաև Կոստանդին Քլօրը։ Այս անուան տակ ծածկուած է պարսկական Միհր աստուծոյ պաշտամունքը, որ իւր զանազան տեսակ արարողութիւններով մեծ տպաւորութիւն էր անում։ Նշանակալից է այն փաստը, որ այս պաշտամունքը օտար է և ներմուծուած։ Ուստի և նրա երկրպագու-

ները քրիստոնէութիւնը նրա հետ համացեղ և համազօր են հաշուել։ Եւ Կոստանդինը մոցնում է անյաղթելի արեգակի պաշտամունքը, սակայն այդ պաշտամունքը վերակազմում է Ապոլլոնի պաշտամանն, ինչպէս երևում է հռետորներից մէկի Կոստանդնի առաջ ասած ողջոյնի ճառերից մէկից, որտեղ գործ է դրուած — «Apollo tuus» արտայայտութիւնը։ Քրիստոնեաների հետ ունեցած յետագայ յարաբերութիւնը Կոստանդնի մէջ առաջ բերեց աւելի սերտ տրամադրութիւն դէպի քրիստոնեաները։ Նա տեսաւ, որ քրիստոնեաները, որպէս հպատակներ, լաւ ժողովուրդ են, որ նրանք երկու կարգապահութեան էլ — կայսեր և եպիսկոպոսի — հնազանդւում էին։

Կարելի է տեսնել, որ Կոստանդինը գործերը վարում էր շատ հեռատեսական կերպով և 312 թուից յետոյ, երբ որ նա 313 թ. սկզբին իրեն համիշխան Լիկինիոսի հետ, քրիստոնեաներին միայն հաւասար ազատութիւն տուեց, և ոչ միայն քրիստոնեաներին, այլ և կայսրութեան ամբողջ ազգաբնակութեան ազատութիւն տուեց, որ ամէն ոք իւր սեպհական հաւատքը պահպանէ, պաշտէ այն Աստուծուն, որին հաւատում է նա։ Եթէ հրովարտակի մէջ յիշւում է քրիստոնեաների մասին, այդ այն պատճառով է, որովհետև նրանք յամառութեամբ ազատութիւն էին խնդրում։ Կայսեր այս շնորհը տարածւում էր նաև քրիստոնէական ժողովների վերայ էլ։ 313 թ. հրովարտակը հեթանոսներին իրենց հաւատի համար չէր ճնշում, սակայն նա հնարաւորութիւն էր տալիս ոչ միայն քրիստոնէութիւն՝ այլ և ուրիշ հեթանոսական պաշտամունք ընդունելը։ Այս հրովարտակը իւր մէջ կրօնական համբերատարութեան շատ մեծ տարրեր էր պարունակում։ Իսկապէս, կարելի է ենթադրել թէ մարդ, որ առաջ Միհրի երկրպագու էր, որին կարող էր գերագոյն աստուած համարել, միևնոյն ժամանակ պարտաւորուած էր ճանաչել և Իւպիտերին։ Մինչդեռ այժմս, նա հնարաւորութիւն էր ստանում պաշտել մի միայն Միհրին, իսկ հռոմէական միւս աստուածներին պաշտօն չմատուցանել, մի բան, որ նա առաջ առանց

վանդի ենթարկուելու չէր կարող անել։

Այսպիսով Կոտանդնի առաջին քայլն այնպէս էր, որ քրիստոնէութեանը, բացի հաւատի ազատութիւնից և միւս կրօններին հաւասարացնելուց, ուրիշ ոչինչ չէր խոստանում։ Միւս մնացածը Կոտանդնի ազնուութեան արտայայտութիւնն էր. նա տեսնում էր, որ քրիստոնեաները խիստ ճնշուած էին,—նրանց կայքերը գրաւում էին հէնց միայն նրա համար, որովհետև նրանք Աստուծուն պաշտում էին իրենց հաւատի համաձայն։ Կոտանդինն այնքան մեծահոգի գտնուեց, որ հրամայեց վերադարձնել քրիստոնեաներից խլուած կայքերը. (աստուածպաշտական ժողովների շինութիւնները)։

Մի քայլը անել տուեց և յաջորդ քայլը։ Կայսեր առաջին խօսքի համաձայն շատ հեշտ էր վերադարձնել քրիստոնեաների կայքը, որ դեռ պետական սեպհականութիւն էր կազմում (քրիստոնեաներից անցել էր պետութեանը)։ Սակայն կային և շատ կայքեր, որոնք մասնաւոր սեպհականութիւն էին դարձել, երբ այդպիսիները աճուրդով ի վաճառ էին հանուել։ Այս հանգամանքը քրիստոնեաների մէջ անհաւասարութիւն կմտցնէր,—ոմանք կստանային իրենց կայքը, իսկ ուրիշները—ոչ։ Ուստի և վճռուեց մասնաւոր կալուածատէրերից յետ գնել այդ վաճառուած կայքերը։ Ապա ծագեց և երրորդ տեսակի խնդիր։ Նախկին հալածանքների ժամանակ քրիստոնէական տաճարները ոչ միայն խլում էին, այլ և քանդում էին.—չարիքի դէմ չարիք էին գործում։ Այստեղ էլ պէտք էր քրիստոնեաների մէջ հաւասարութիւնը վերահաստատել։ Կոստանդինը վճռեց վերականգնել քանդուած տաճարները—և այդ նպատակի համար փող տուաւ։ Այս գործի մէջ միջնորդ անձնաւորութիւն դարձաւ Աֆրիկայի պրոկոնսուլ Անուլինոսը, որն առաջ հալածում էր քրիստոնեաներին։ Կոստանդինը մտածում էր, եթէ քրիստոնեաներին յետ տրուի այն, ինչից որ նրանք առաջ զրկուել են, դրանով հեթանոսներից ոչ ոքի վիրաւորած չի լինի, կամ եթէ նրանցից մոլեռանդներին դիպչի էլ, յամենայն դէպս շատ քիչ կլինին

այդպիսիները, որովհետև նախորդ հալածանքը ձեռակեն էր։

Եւ այսպիսով, քրիստոնէութեան համար այս առաջին նպաստաւոր քայլն Կոստանդինն 313 թ. կարող էր անելիւղ կերպով կատարել։ Նրա բացատրութեան համար ոչ մի գերբնական միջնորդութիւն չէր հարկաւոր, դրա համար հարկաւոր չէր ոչ երկնային նշան և ոչ յայտնութիւն երազի մէջ։ Այդ Կոստանդնի հոգու ազնուութեան արտայայտութիւնն էր։ Բայց միևնոյն ժամանակ այս առաջին քայլերը չեն ապացուցանում, որ նա ինքն անցաւ քրիստոնէութեան կողմը, այս ուղղութեան մէջ նա շատ դանդաղ և զգոյշ էր առաջ գնում։ Նա խստասուն կրթուած և շրջահայեաց մի կայսր էր։ Նա կարող էր ընդմիշտ հեթանոս մնալ, ինչպէս այդ տեսնում ենք նրա կեանքի հանգամանքներից։ Կոստանդինը կարևոր չհամարեց իրենից վերցնել «pontifex maximus» տիտղոսը։ Հեթանոս քուրմերը և քրմական դասը ոչ մի բանի մէջ խակապէս ճնշուած չէին։ Ի հարկէ հեթանոսութիւնն էլ պէտք է անխուսափելի կերպով մի փոքր ճնշուած կրէր. այժմ հեթանոսական կրօնի պարտականութիւններ կատարելու համար չէր կարելի չցանկացող մարդկանց պատասխանատուութեան ենթարկել։ Միևնոյն ժամանակ չէր արգելւում հեթանոսներին ի պատիւ նրա նոր տաճարներ կառուցանել։ Օրինակ, մի տաճար շինուեց ի պատիւ կայսեր ազգատոհմի — gens Flavia.

Եթէ տրիթ էր լինում, որ Կոստանդինը հեթանոսների «ազատութիւնը» սահմանափակում էր, այդ միայն խաղաղասէր երևոյթների նկատմամբ էր լինում. հարուածներն ուղղուած էին հեթանոսական այն տաճարների դէմ, որոնց մէջ բուն էր դրել անբարոյական պաշտամունքը։ Ճշմարիտ է, հեթանոսներից խլուեցին նաև տաճարներ՝ շինուած այնպիսի տեղերում, որոնք քրիստոնեաների համար գլխաւորապէս սրբավայրեր էին, բայց այդ լոկ հետևանք էր այն ընդհանուր դրութեան, որով քրիստոնեաներն էլ իրաւունք ունէին իրենց Աստուծուն պաշտել։ Իբրև մի սուրբ տեղ, օրինակ վերադարձրուեց քրիստո-

նեանների յայտնի Մամբրէի կաղնին։ Նոյնչափ չնչին էին և միւս սահմանափակումները, որոնց հեթանոսական կրօնը ենթարկուեց Կոստանդին Մեծի ժամանակ։ Կառավարութիւնը հեթանոսներին հալածում էր «divinationes»-ի համար։ Դրա մութ, զաղտնի գուշակութիւններ էին կայսեր սպաղան իմանալու համար. հեթանոսական կրօնի ընդունած միւս գուշակութիւնների համար չէին հալածում։ Կոստանդին Մեծը վերջին տարիները աշխատում էր փոխել sacrificia—արիւնոտ զոհաբերութիւնը։ Եթէ այդ օրէնքը գործ չդրուեց, այդ միայն այն պատճառով, որ այդ միջոցը շատերին հաճելի չէր։

Ուրեմն, միանգամայն արդարացի է, որ Կոստանդին Մեծի ժամանակ կրօնի դրութեան վերայ պէտք է նայել որպէս Parität-ի—այսինքն, որպէս կրօնների մէջ հաւասարութեան վերայ։ Կոստանդին Մեծն այս հաւասարութիւնն աշխատում էր պահպանել ամէն տեղ, նոյն իսկ մանր բաների մէջ, օրինակ, դրամների վերայ պատահում են և քրիստոնէական և հեթանոսական խորհրդանշանների պատկերացումներ, թէև ժամանակի ընթացքում սկսում են գերակշռել քրիստոնէական խորհրդանշանները։ Սա երևոյթին, այս բոլորը Կոստանդին չեն ընորոշում, իբրև մի անձնաւորութիւն, որ ձևականօրէն յայտարարում է, թէ ինքն այլ ևս հեթանոս չէ, այլ քրիստոնեայ է։

Այնուամենայնիւ, Կոստանդինը, թէև դանդաղ, բայց հաստատապէս մօտենում էր այն բանին, որ քրիստոնէութիւնը տիրապետող կրօն դարձնէ։ Ինքը չեզոք մնալով, բայց և այնպէս նա, իւր որդուցը քրիստոնէական կրթութիւն տուեց, որով և նրանց չեզոքութիւն պահպանելու անհնարաւորութեան մէջ դրեց։ Բոլորի համար էլ պարզ էր, որ Կոստանդնի գործ դրած այսպիսի միջոցների հետևանքը պէտք է լինէր քրիստոնէական կրօնի յաղթանակը։ Ընդունել, որ Կոստանդինն այդ կատարեց առանց գիտակցելու քրիստոնէութեան առաւելութիւնը, կարելի չէ. եթէ այդ գիտակցութիւնը չունենար Կոստանդինը, իւր որդուցն էլ կը կրթէր այնպէս, որ նրանք այն գերը խաղալ

կարողանային, ինչ որ ինքն էր կատարում, սակայն նա նրանց համար աւելի լաւ ապագայ պատրաստեց։

Կոստանդինն ինքը քրիստոնէութեանը մօտենում էր քայլ առ քայլ։ Հեթանոս գրողները նրա բնաւորութեան մէջ ոչ թէ յառաջադիմութիւն՝ այլ յետադիմութիւն են տեսնում։ Նրանցից մէկը նկատում է, թէ Կոստանդին Մեծն «սկսեց ինչպէս տղամարդ, վերջացրեց որպէս պատանի» (paene puer)։ Նրա բնաւորութեան եռանդը թուլանում էր, և հաւանականօրէն այդ ազդում էր քրիստոնէութիւնն ընդունելու նրա վճռահատութեան վերայ, նա թէև ցանկանում էր Յորդանանի ջրերում մկրտուել, սակայն իւր մկրտութիւնը յետաձգում էր։ Կոստանդին Մեծի ժամանակակիցների տեսակէտից այս հանգամանքն ոչինչ տարօրինակութիւն չէր ներկայացնում։ Կոստանդին Մեծի մէջ պակասում էր հաւատ դէպի սեպհական անձնաւորութիւնը և ոչ թէ հաւատ դէպի Քրիստոս։ Նա յոյս ունէր մկրտութեան շնորհիւ խորհրդաւոր կերպով մաքրուել մեղքերից, որպէս զի ապագայ կեանքի մէջ մանի բոլորովին արբուած։

Ճշմարիտ է, Կոստանդնի դէպի քրիստոնէութիւնն ունեցած այս արամադրութեան առթիւ ոմանք ցոյց էին տալիս և նրա մի քանի գործերը, որոնք քրիստոնէութեան դէմ էին։ Մատնանշում են Կոստանդնի անեղբոջ՝ Մաքսիմիանոսի, Կոստանդնի փեսայ Լիկինիոսի, սրա որդի՝ Լիկինեանոսի և վերջապէս Կոստանդնի որդի՝ Կրիսպոսի գլխատման վերայ։

Մաքսիմիանոսի գլխատումը քաղաքական անհրաժեշտ գործ էր։ Մաքսիմիանոսը Դիոկղեսիանոսի հետ կապած պայմանի համաձայն պէտք է 20 տարուց յետոյ հրաժարուէր Օգոստոս տիտղոսից և ծիրանին վայր դնէր։ Սակայն նա այդ կատարեց իւր կամքին հակառակ։ Այդ ժամանակ Բրիտանիայում և Գալլիայում եղած զօրքերը Օգոստոս հրատարակեցին Կոստանդնին, իսկ Հռոմի զօրքերը (պրետորիանները)—Մաքսիմիանոսի որդի Մաքսենտիոսին։ Մաքսիմիանոսի համար այդ յաջող առիթ էր թագը ձեռք ձգելու։ Նա եկաւ Հռոմ, փորձեց Դիոկղեսիանոսին համոզել իրեն

վերադարձնելու կառավարությունը, և նոյն իսկ փորձեց Հռոմի գօրքերին ապատամբեցնել որդու դէմ։ Սակայն ծաղրի ենթարկուելով, նա ստիպուած էր Գալլիա փախչելու։ Այստեղ հանդիպեց նա Կոստանդինին և Օգոստոսի տիտղոսի հետ նրան տուեց և իւր դուստր Ֆաուստայի ձեռքը։ Կոստանդինի և Մաքսիմիանոսի մէջ յարաբերությունները անհաստատէին։ Մաքսիմիանոսը, որպէսզի ինքը կարողանայ նորից թագը ձեռք ձգել, լուր տարածեց, թէ Կոստանդինը վախճանուել է Գալլերի դէմ կատարած արշաւանքի ժամանակ։ Կոստանդինը աքսորեց նրան Մարսէլյայն պայմանով, որ նա ապրէ այնտեղ, որպէս մասնաւոր անհատ։ Սակայն Մաքսիմիանոսը այստեղ էլ կանգ չառաւ։ Նա առաջարկեց իւր Ֆաուստա դստերոջը մասնակից լինել իւր ամուսնու ապանութեան գործին։ Այդպիսով Ֆաուստային վիճակուած էր ընտրութիւն անել հօր և ամուսնու մէջ։ Սակայն նա գերադասեց ամուսնուն և հօր դաւանի դիտաւորությունները յայտնեց նրան։ Երբ որ Մաքսիմիանոսը դաշոյնը ձեռքին գնում էր Կոստանդինին սպանելու, թագնուած սարուակը, որ նշանակուած էր նրան հեռուելու, բռնեց նրան և մեղադրանքները գլխաւորեց։

Ինչ Լիկինիոսի գլխատմանն է վերաբերում, ասում են, որ Կոստանդին Մեծը պատժեց Լիկինիոսին contra fidem sacramenti—այսինքն, հակառակ նրա կեանքը պահպանելու համար տուած խոստմանը։ Սակայն այս ծանրակշիռ արտայայտությունը ոչնչանում է այն ցուցմունքով, որ գտնում է Anonymus Valesianus-ի մէջ (pars prior, Origo Constantini imperatoris), մի տղիւր, որ անպայման պատմական արժէք ունի. «tumultu militaribus exigentibus in thessalonica jussit occidi»։ Ոչ մի երդմնական խոստումն չի կարող յարատև ճշմարտություն ունենալ, եթէ հակառակ կողմը ստիպում է դրժել խոստումը։ Օրինակ, NN. տէրությունը իսկ է տուել պաշտպանել PP. տէրությունը։ Բայց եթէ PP. տէրությունը գինուած այժմ խուժում է NN-ի սահմանները, այն ժամանակ տարօրինակ կլինէր, եթէ NN. տէրությունը շարունակեր խնայել PP. տէրու-

թեանը Զինուորները երկիւղ կրելով, թէ մի գուցէ Լիկինիոսը Թեսաղոնիկէում գաւադրութիւն կազմի, ուստի Կոստանդնին հարկադրեցին նրան դլխատելու հրաման տալ։

Կոստանդնի կեանքի մէջ, իբրև մի բարոյական բիծ մնում է նաև Լիկինիոսի որդի—Լիկինիանոսի դլխատումը։ Սակայն այդ բանին հարկադրել կարող էին միայն նրան հաւատարիմ լեդիոնները։ Որ նրանք ընդունակ էին Կոստանդնին հարկադրելու այդպիսի քայլ անելու, դրան ապացոյց է նրանց ձեռքով Կոստանդնի ազգականներին, Կոստանդիոս Քլորի երկրորդ ամուսին՝ Թէոդորայի որդոց կոտորելու դէպքը։ Նրանք դէպի Կոստանդինը և նրա որդիքն ուծած հաւատարմութեան պատճառով չէին ցանկանում, որ Կոստանդնի մահից յետոյ դահին ուրիշ թեկնածուներ լինեն։

Վերջապէս մատնանշում են Կոստանդնի որդի Կրիսպոսի դլխատման վրայ (ծնուած նրա առաջին կին Մինեռվինայից)։ Այս գործը շատ մութն է և հիմք չկայ չհաւատալու հեթանոս Զոսիմոսի հաղորդածին, թէ ինքը կայսրը զղջացած այդ դէպքի համար՝ սպանուածի համար արձան կանգնեցրեց վերատուութեամբ՝ ἠδικημένῳ (անարդարութեան զոհին)։ Գլխատումն մութ պայմանների մէջ էրդրած, և շատ կարելի է Կրիսպոսին մեղադրում էին այն բանի համար, թէ նա դաւադիր է եղած իւր հօր կեանքի դէմ։ Յամենայն դէպս դժուար է ասել թէ այդ քաղաքական յանցագործութիւն էր, թէ՞ ընտանեկան թիւրիմացութիւն, (նրան մեղադրում էին Ֆաուստայի հետ,—որը շատով նոյնպէս գլխատուեց, կենակցելուն համար)։

II. ՅՈՒՆԱՑ ԵՒ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆԵՐԻ ԵՒ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑԻՆ

Եկեղեցու և պետութեան մէջ յարաբերութիւնների որոշման համար մի այլ գործօն են հանդիսանում իրենք քրիստոնէական եկեղեցու անդամները։ Այն ժամանակները քրիստոնէութիւնը իւր գլխաւոր զանգուածով ամփոփուած էր գաւառական աշխարհի սահմանների մէջ, և բնական հարցերի պայմանների ու պատմութեան ազդեցութեամբ կազմակերպուած յունաց և հռովմէացւոց ազգային բնաւորութեան գծերն իրենց ներգործութիւնն ունեցան այդ նոր յարաբերութիւնների մանրամասնութեանց գործնական մշակման մէջ։

Երբ յոյների մասին խօսք է լինում, բնականաբար պատկերացնում ենք մի ժողովուրդ, որ առատապէս օժտուած է մտաւոր ընդունակութիւններով, որ փիլիսոփայութեան, գիտութեան և արուեստի մէջ փառք է վաստակել — մի ազգ, որ ստեղծում է բուռն զգացմունք դէպի ազատութիւն և ստեղծիչ դէպի բռնակալութիւնը, — մի ցեղ որ գլխաւորապէս հատարակապետական է։ Իւր սահմանափակ հայեացքով, վերացական սկզբունքների ուղղութեամբ, տեսութիւնների թռչութեամբ, յաճախ չոր ու ցամաք գործնականութեամբ և նեղ գրականութեամբ իդէալական յոյնի կողքին հռովմէացին, թւում է, շատ համեստ և սուեների մէջ է մնում։ Տիեզերական կայսրութիւնը, որը ստեղծեցին տիրող հռովմայեցիները, կեսարիզմը, որ հանդէս եկաւ իբրև կատարելութիւն նրանց պատմական զարգացման, որ յաճախ հասնում էր մինչև բռնակալութեան,

— չէ վկայում յօգուտ հռոմէական ցեղին յատուկ ազատութեան զգացմունքի եռանդի մասին։ Եւ երբ մենք միայն մտածենք, որ Կոստանդին մեծի ժամանակից սկսած քաղաքական ծանրութեան կենդրոնը լատին Արևմուտքից տեղափոխուում է յոյն Արևելք, այն ժամանակ, ըստ երևոյթին, մեզ ճնում է այս յաջող պատմական զուգադիպութիւնը միայն ողջունել։ Սակայն գործի մանրամասը քննութիւնը նրան ներկայացնում է ուրիշ կերպ։

Եկեղեցու և պետութեան յարաբերութեան հարցը ըստ էութեան իրաւաբանական է։ Մինչ իրաւաբանական այն սկզբունքները, որոնցով ապրում էր յոյն աշխարհը, ոչ ոքի մէջ առանձին հետաքրքրութիւն չէր առաջ բերում, հռոմայեցի ժողովրդի իրաւաբանական միտքը միշտ էլ գիտնականներին ակնածական զարմանք է պատճառել։ Հռոմայեցիք տեսութիւնների մէջ շատ առաջ չէն գնացած, նրանց փիլիսոփաների գրչի տակ փիլիսոփայական հարցերը շատ շուտ նեղ գործնական կերպարանք էին ստանում։ Դրա փոխարէն այս ժողովուրդը զօրեղ էր կառավարչական, կազմակերպչական տաղանդով։ Նա ընդունակ էր իշխելու, ընդունակ էր կառավարելու։ Մինչդեռ Յոյներին հէնց այս ընդունակութիւնն էր պակասում։ Իրենց պատմութեան ծաղկման շրջանում, նրանք երբէք չկարողացան իրենց հատարակապետութիւնից մի ամուր, համեմատաբար քաղաքական ամրողջութիւն կազմել։ Նոյն իսկ այն ժամանակ էլ, երբ Հեգեմոնիան յոյն աշխարհում Մակեդոնիայի հզօր կայսրների ձեռքն անցաւ, այդ ժամանակ էլ կենդրոնախոյս ոյժերը յաղթեցին կենդրոնաձիգ ոյժերին։— Ալէքսանդրի միապետութիւնը իրենից երկար չապրեց։ Յոյնը, որ աւելի հակուած է վերացականութեան, բնականաբար արամադիր էր իւր ուշադրութիւնը գաւառաբանական մտքի զարգացման վերայ կենդրոնացնել և գործնական յարբերութիւնների շրջանը մոռացութեան տալ։

Միևնոյն ժամանակ, Յոյներին ոգևորող ազատութեան զգացմունքը հազիւ թէ նրանց ազգային բնաւորութեանը

առանձին առաւելութիւն է տալիս հռոմայեցոց առաջ։ Յոյների ազատութիւնը—շատ յարաբերական հասկացողութիւն էր. բռնակալութեան առաջ ունեցած նրանց երկիւղը, այն ազատիչ բնազդներից մէկն էր, որի օգնութեանը նրանք աւելի կարիք ունէին, քան ուրիշ ժողովուրդներ։ Եւ արդարև աթէնացիների—յոյն ցեղի, այդ իսկական ներկայացուցիչների—կառավարութեան մէջ անձնական սկզբունքը տիրապետող է հանդիսանում։ Աթէնքի պատմութիւնը կարելի է լրիւ կերպով ներկայացնել աչքի ընկնող մարդկանց կենսագրութիւններն անելով, որոնք հասարակապետութեան գլուխ էին անցել։ Հազիւ թէ նոյնը կարելի լինի ասել հռոմի համար։ Յոյն պատմական գործիչների կարգում գերակշռում են խիստ տաղանդաւոր մարդիկ. հռոմայեցիների մօտ—աւելի կամ պակաս գերակշռում էին միջնորդ մարդիկ։ Այնտեղ աւելի մեծ նշանակութիւնը ունի անհատի հանճարը, այստեղ—բարդուած սիստեմը։ Յոյն աշխարհի հերոսները իրենց հայրենիքի վիճակը կառավարում էին աւելի կատարեալ կերպով, քան այդ կարելի է հռոմայեցիների համար ասել։ Այս երկու ազգերի դէպի իրենց ներկայացուցիչներն ունեցած յարաբերութիւնների մէջ մեծ տարբերութիւն կայ։ Աթէնքի պետական գործիչները աւելի քան հաւասարմասար անձինք էին ժողովրդի, դրանք ժողովրդի սիրելիներն էին. հռոմայեցոց հիւպատոսները պարզապէս հասարակ պաշտօնեաներ էին։ Հռոմայեցի հիւպատոսը իւր պաշտօնավարութեան ժամանակի լրանալուց յետոյ բնականաբար յետ էր քաշւում, անցնում էր պատուաւոր հիւպատոսների շարքը։ Աթէնքի պատմական գործիչների համար այդպիսի որոշուած ժամանակ գոյութիւն չունէր,—նրանք իրենց ամբողջ կեանքի ընթացքում կառավարութեան գլուխ էին կանգնած. իսկ եթէ նրանք թողնում են իրենց պաշտօնը, այդ լինում էր արդէն ժողովրդի դժգոհութեան հետևանք։ Նրանք նոյն իսկ աւելի վատ վախճան էին ունենում—համարեա պետութեանը դաւաճանելով,—յիշեցէք Թեմիստոկլէսին։ Աթենացիք սիրում էին իրենց յայտնի գործիչների, իսկ եթէ նրանց միայն յարգում էին՝

այն ժամանակ սկսում էին երկիւղ կրել և շտապում էին ազատուել այդպիսիների ներկայութիւնից խեղեղաութեամբ[1]։ Այս գործնական եզանակի մէջ զգացւում է անօգնականութեան գիտակցութիւնը մաւոր այժի հմայքի առաջ, անընդունակութիւնը—նրա գործունէութիւնը պահպանելու հարկաւոր սահմանների մէջ։ Աթէնացին տատանւում էր խռովութեան և ակնածութեան ծայրայեղութիւնների մէջ։ Հռովմայեցիք պարզապէս գիտէին յարգել իրենց հերոսներին,—այն ժամանակ, երբ կվիրիտները արժանի յարգանք էին մատուցանում իրենց պաշտօնեայ—զեներալին, նրան հաւատարիմ զինուորները ցեխոտում էին իրրև մտնաւոր անհատ։ Հռովմում հերոսի անձը մի առանձին նշանակութիւն չունէր։ Աթէնքի փոդոցներում հռովմէական յաղթանակի տեսարանը միանգամայն անելևակայելի է։ Պաշտօնեան Յունաստանում կարող էր այն ատիճանի գրաւել հասարակական կարծիքը, որ կատարեալ բռնակալ էր դառնում իւր առոյգ յաճախ թեթևամիտ ազգի համար. Աթէնքում բռնապետութիւնը քաղաքական բնաւորութիւն ունէր։ Հռովմում ատաղանդաւոր անհատը շատ բան կարող չէր անել իրաւական յարաբերութիւնների ամուր կերպով հաստատութիւն ստացած ձևերի վերայ. և եթէ բռնապետներ երևան էին գալիս նաև Հռովմում, նրանք ստիպուած էին յենուել զինուորական կողմը ոյժի վերայ։ Բռնապետութիւնը Հռովմում զինապետութեան տիրապետութեան նշան էր։

Մի հանգամանք ևս բաւականաչափ ազդել է յոյների բնաւորութեան վերայ,—չնայած նրանց դէպի ազատութիւնն ունեցած սիրուն, նրանք Հռովմի երկաթէ տիրապետութեան ենթարկուեցին և երբէք չկարողացան այդ լուծը թօթափել իրենցից։ Սարկութիւնը նոյն իսկ գիմացկուն հռովմայեցիների վերայ իւր տարբերուծող ազդեցու-

1) Նախկին Յունաստանում ժողովրդական դատաստան, որով պետութեան համար ընդհակառակ համարուած անձն աքսորւում էր։ Ժողովուրդը իւր քուէն խեցու վերայ էր գրում։

Ծան. թարգմ.

թիւնը թողել էր, և նրանց բարոյապէս ստորացնում էր։ Յոյնին նա ուղղակի ճնշում էր,— որ ոյժ չունենալով բացարձակ ճանապարհով ազատութիւն ձեռք բերել, գործում էր մութ ճանապարհներով, նա այդ նպատակին դիմում էր կողմնակի ճանապարհներով խարդաւանքով դաւադրութեամբ խորամանկութեամբ և վրիժառութեամբ։ Յոյների գործ դրած այս ստոր միջոցները նրանց ատելի դարձրին հռոմայեցիների աչքում,—Յուվենալը (Ювенал), որ իւր հայրենակիցների բարոյական դրութիւնը շատ էլ վարդապոյն չէ ներկայացրում, յոյների մասին խօսում է խորին ատելութեամբ.—natio tota comoeda։ Նա յոյներին համարում է խաղաս կեղծ և ստոր շողոքորդներ։ Յոյների բնաւորութեան այս կողմը, ի հարկ է, չէ կարելի առանց խիստ սահմանափակումների թող տալ. տարբերութիւնը վերաբերում էր, ի հարկ է, գլխաւորապէս յոյն ցեղի քաղաքակրթական դասին. միևնոյն ժամանակ յունարէն բոլոր խօսողները մաքուր յոյներ չէին։ Բայց ազգերի խառնուրդն էլ միշտ չէր ազդեցնում նրանց։

Յամենայն դէպս դասական այս երկու ժողովուրդները կանգնած են միմեանց դիմաց՝ մէկը որպէս աւելի ճկուն, խստաբարոյ, ուղղամիտ և հաստատուն,—և միւսը՝ առաւել—նուրբ, փափուկ, երբեմն թեթեւամիտ, անհաստատ, մինչ նենգութեան և խորամանկութեան հասնող շողոքորդ խուսափող բնաւորութեամբ։ Երկու ժողովուրդներն էլ ունէին իրենց արժանիքներն ու իրենց պակասութիւնները։ Հռոմի քրիստոնեաներից աւելի բնական էր սպասել առաւել յարատև, գլխաւորապէս սիստեմատիկ պաշտպանութիւն եկեղեցական ազատութեան համար, երբ տէրութեան կառավարիչների կողմից յարձակումներ լինէին այդ ազատութեան դէմ։ Սակայն նրանք կարող էին չափազանցացնել վիճելի հարցերի նշանակութիւնը և ազատութեան համար մղած կռիւը դարձնել գերիշխանութեան կռիւ։ Յոյն քրիստոնեայ աշխարհը, երեք դար նեղութիւն քաշելուց յետոյ, շատ հեշտութեամբ կարող էր քրիստոնեայ կայսեր նոր յարաբերութիւնների համայքին ենթարկուել և նրա գոր-

ծունէութեան վերայ ունենալիք անհրաժեշտ հսկողութիւնը թուլացնել։ Դաւանաբանական գերիշխող շահերի համար յոյնը կարող էր շատ հեշտութեամբ զիջել մի քանի ձևական առաւելութիւններ։ Առաջինները կարող էին եկեղեցու և պետութեան միջև յարաբերութեան հարցը սխալ լուծել, ազատութեան հարցը դարձնել իշխանապիրութեան հարց։ Յոյների բնաւորութեան մէջ կային գրաւական ներ այն բանի համար, որ նրանք կարող էին այդ հարցը բորբոքին չլուծել իւր պարզ, տարրական դրութեամբ, իսկ մեծ հաւատ ընծայել բարեկամաբար տրամադրուած կայսեր գործունէութեանը և կռիւ սկսել եկեղեցու ազատութեան համար միայն այն ժամանակ, երբ պետական իշխանութեան ձգտումները կդիպչեն դաւանաբանական հաւատալիքներին։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ամէն մի մտաւոր երևոյթի վերաբերութեամբ ազգայնական տարբերութիւնների այսպիսի ազդեցութիւնը դժուար է արդարացնել։ Գործն այս ձևով տանելով, մենք անպայման կհանդիպենք բազմաթիւ բացառութիւնների։ Եւ այդ հասկանալի է։ Պատմական դէպքերի գլխաւոր գունաւորումը կախուած է ընդհանուր յատկութիւններից և մարդկային բնութեան թուլութիւնից. — հռոմայեցին յոյնի նման շատ անգամ գործում է դրդուած միևնոյն պատճառներով, որոնցով կգործէր և գերմանացին և սլաւոնացին։ Այն, ինչ որ ազգային տարբ է մտցնում, թէև թոյլ, բայց միշտ արտացոլում է եկրորդական երանգներով ընդհանուր գունաւորման մէջ։ Բայց վերջ ի վերջոյ ազդեցութիւնների այնպիսի մի գումար է առաջանում, որ հռոմէական եկեղեցին գտնում է մղում համաշխարհային իշխանութիւն ձեռք բերելու, պետութեան վերայ իշխելու համար, մինչդեռ երբէք կարելի չէ Արևելեան եկեղեցուն մեղադրել, թէ նա պետական իրաւունքների դէմ որևէ լուրջ ոտնձգութիւն արած լինէր։

Մի կողմից՝ բացի Կոստանդին կայսեր անձնական առանձնայատկութիւններից և միւս կողմից՝ յոյն հռոմէ-

ական քրիստոնեաների ազգային բնաւորութիւնից—եկեղեցու և պետութեան յարաբերութեան վերայ պէտք է ազդեցութիւն ունեցած լինի և նոյն իսկ առաւել քան ուրիշ որ և է բան՝ այս նոր կազմակերպուող դաշնակցութեան անդամների պատմութեան բերմունքով կազմուած յատկութիւնները։

Կայսրը կամայ ակամայ պէտք է հին պետութեան աւանդութիւնների ներկայացուցիչ համդիսանար, իսկ այդ աւանդութիւններն նրան մղում էին չճանաչել նոր դաշնակցի հաւասար իրաւունքներ։ Հռոմէական պետութիւնը պատմական բերմամբ զարգանում էր հռոմէական՝ աստուածապաշտական ծէսի հետ նրան սերտ կերպով ընդգրկելով, ինչպէս իւր ամբողջութեան մի մասը։ Եկեղեցին պետութիւնից բաժանելու, կրօնական և քաղաքական հաստատութիւնների սկզբունքային տարբերութեան մասին Հռոմի պետութեան նախկին շրջանում խօսք անգամ չէր կարող լինել։ Ընդհակառակը նրա պատմութիւնը այնպէս դասաւորուեց, որ Հռոմը այդ հաստատութիւնների իւրատեսակ բնաւորութիւն իմանալու ոչ մի առիթ չունէր։ Իբրև բնական կրօն, հռոմայեցի ժողովրդի կրօնը իւր մէջ շատ քիչ բարոյական տարրեր էր պարունակում, որոնք այդ ժողովրդի վերայ այնպիսի պարտականութիւններ դնէին, որ նրա քաղաքական նպատակներին և ձգտումներին հակառակ լինէին։ Կրօնի և պետութեան մէջ ընդհարումներ չէին կարող այնպէս խիստ լինել, ինչպիսի ընդհարումները հնարաւոր է այժմեան պետութեան զանազան հիմնարկութիւնների մէջ։ Ծանր ընդհարումներ չէին կարող տեղի ունենալ։ Նոյն իսկ այնտեղ, որտեղ կրօնը պետական իշխանութեանը իւր նշանակութիւնը զգացնել էր տալիս (ի հարկէ, որտեղ այդ հեղինակաւորութիւնը փաստ էր և ոչ հռետորական արտայայտութիւն), այս դէպքերում էլ աւելի յաճախ կրօնը իրրև վարագոյր (ширма) էր թւում, որի յետևը, գործում էին ազնուական կուսակցութեան մարմինները։ Իրրև տպագոյց պետական և կրօնական սկզբունքների միաւորութեան կարելի է մատնա-

ցոյց անել, օրինակ, որ, նոյն պատրիկները [1]), որոնց ձեռքումն էր կենտրոնացած նաև պետական ամենագլխաւոր պաշտօնները, միևնոյն ժամանակ և քուրմեր էին։ Վերջապէս Օգոստոսից սկսած Հռոմէական կայսրները բարձրագոյն քահանայապետներ էին։ Միևնոյն անձի մէջ այս երկու կոչումների միացումը կարող էր միայն խնդիրը բարդացնել։

Քրիստոնեաները սովորած էին յարմարուել տիրող հանգամանքներին։ Բանն այն չէր, որ քրիստոնեայ կայսրները դիտակցօրէն և մտադրեալ կերպով գործում էին իբրև քրիստոնէական եկեղեցու pontifices maximi. Այլ վտանգաւորն այն էր որ հռոմէական կայսրը սովոր էր իրեն շղթայուող ամէն բանին անսահման իշխանաւորի հայեացքով նայել։ Նրա համար անսովոր բան էր սեպհական կամքը, որ տարածւում էր ամբողջ պետութեան հեռուներ և նրա կրօնի վերայ, սահմանափակուած տեսներ։ Pontifex maximus կոչման առանձնաշնորհումները նրա դիտակցութեան մէջ հաստատուած էին որպէս անբաժանելի մաս իւր անձի, որպէս գերագոյն ինքնիշխան պետի։ Քրիստոնեայ կայսրը պահպանելով ինքնիշխանութեան իրաւունքների լրութիւնը, անգիտակցօրէն կարող էր այնպիսի պահանջներ անել, որոնց հիմքն էր կազմում հեթանոսական պաշտամունքի ժամանակ նրա ունեցած քահանայապետական կոչումը։ Քրիստոնէական և հեթանոսական կրօնների հիմունքների մէջ եղած տարբերութեան պատճառով (վերջինս առաւելապէս արտաքին պաշտամունք էր, իսկ առաջինը դաւանաբանական ճշմարտութեան ներքին համոզումն) այս հին թթխմորը կարող էր բռնութիւնը արտաքինից տեղափոխել ներքինի վերայ, կարող էր ներդործել մարդկային հոգու ամենախորին գաղանա-

---

1) Հին հռոմէական տոհմական ազնուականներ, որոնք ունէին գլխաւորապէս քաղաքական իրաւունքներ և մեծ քանակութեամբ հողեր էին տիրապետում։

Ծանօթ. Թարգմ.